«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը հավատարիմ մնալով իր առաքելությանը, շարունակում է իրականացնել բարձրորակ միջին մասնագիտական կրթություն և պատրաստել որակյալ մասնագետներ, որոնց մեծամասնությունը իրականացնում են մասնագիտական գործունեություն:

Հաշվետու տարում ՈԱ պատասխանատուի հետ համատեղ ծավալուն աշխատանքներ են կատարել ուսումնական գործընթացների բարելավման ուղղված:

Դեկտեմբերի 12-15-ն ընկած ժամանակահատվածում ՈԱԱԿ փորձագիտական խումբն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի շրջանակներում այց իրականացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ: Փորձագիտական խմբի ղեկավարն էր ՇՊՀ-ի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մ.գ.թ.՝ Ասյա Սիմոնյանը: Փորձագիտական խմբի մյուս անդամներն էին Գիտությունների ազգային ակադեմիայի Հր. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի նեյրոհորմոնների կենսաքիմիայի բաժնի գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու Աննա Սուքիասյանը, Երևանի հենակետային բժշկական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Մերի Սարգսյանը, Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» բաժնի ուսանող Շուշաննա Կարապետյանը: Փորձագիտական խմբի համակարգողն էր ՈԱԱԿ քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Մերի Բարսեղյանը: Նախնական գնահատման փուլում փորձագետներն ուսումնասիրել էին հաստատության ինքնավերլուծությունը, կից փաստաթղթերի փաթեթը և ներկայացված փաստաթղթային հենքը, ինչպես նաև իրականացրեցին քոլեջի ռեսուրսների դիտարկում և դասալսումներ: Այցի առաջին օրը հանդիպումներ տեղի ունեցան քոլեջի տնօրենի և փոխտնօրենների, ինքնավերլուծություն իրականացրած խմբի, ընդհանուր ժողովի, գործատուների և շրջանավարտների հետ: Հաջորդ օրերի ընթացքում փորձագետները շարունակեցին քննարկումները քոլեջի ներքին և արտաքին մյուս շահակիցների հետ:

Փորձագիտական խմբի այցից հետո տեղի ունեցավ ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի նիստը, որի որոշմամբ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջին

շնորհվեց ինստիտուցիոնալ հավատարամագրում՝ 2 տարի ժամկետով և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հունիսի 5-ի № 825-Ա/2 հրամանով հաստատվեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ին շնորհված ինստիտուցիոնալ հավատարմագրման №80 վկայականը:

Քոլեջը հաշվետու տարում քայլեր ձեռնարկեց ընդլայնելու միջազգային համագործակցության աշխարհագրությունը:

2023թ. ապրիլի 12-13-ը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջը հյուրընկալեց «Սևաստոպոլի պետական համալսարանի» պատվիրակությանը՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Վերոնիկա Դուշկոյին և արտաքին կապերի բաժնի պետի տեղակալ՝ Ելիզավետա Ցոկուրի, Հայաստանի Հանրապետությունում Ղրիմի Հանրապետության ներկայացուցիչ Հայկ Բաբուխանյանի և «Իրավունք» Մեդիա-հոլդինգի տնօրեն Վարդան Աստվածատրյանի ուղեկցությամբ:

Այցի երկրորդ օրը «Սևաստոպոլի պետական համալսարանի» ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Վերոնիկա Դուշկոն և արտաքին կապերի բաժնի մասնագետ՝ Իրինա Մելնիկան ուսանողներին վիրտուալ էքսկուրս կազմակերպեցին իրենց համալսարանով և քոլեջով: Շնորհանդեսից հետո նրանք պատասխանեցին ուսանողների հարցերին:Այցի վերջում կնքվեց երկկողմանի համագործակցության հուշագիր:Հուշագրի շրջանակում քոլեջի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները հնարավորություն կունենան անցնել մասնագիտական պրակտիկաներ Սևաստոպոլի պետական համալսարանին կից կլինիկաներում, օգտվել լաբորատորիաներից և այլն: Հետագայում քոլեջի ուսանողներին կհատկացվեն նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու անվճար տեղեր:

2023թ. մայիսի 20-ին քոլեջի հիմնադիր Մարինե Նանյանի հրավերով, ՈԱ գծով տնօրենի տեղակալ Արայիկ Գյոզալյանի և ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Լիլիթ Հարությունյանի նախաձեռնությամբ քոլեջում տեղի ունեցավ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ընդլայնված հանդիպում-քննարկումը: Հանդիպմանը մասնակցում էին՝ Հայաստանում «Campus International» կազմակերպության համահիմնադիր՝ Աշոկ Կրիշնան, «Campus International» կազմակերպության Դուբայի մասնաճյուղի տնօրեն՝ Մեթյու Աբելը , «AVoTaR» ՍՊԸ՝ Մասնագիտական ուսուցման և հավաքագրման գործակալության տնօրեն՝ Թիլո Կրաուսսենը: Քննարկվեցին

ուսումնական, մասնագիտական լրացուցիչ կրթության կազմակերպման, համատեղ վերապատրաստումների կազմակերպման վերաբերյալ հարցեր, նաև քոլեջի գործունեության վերաբերյալ արտասահմանում տեղեկատվության տարածման, համատեղ կրթական կարճաժամկետ ծրագրերի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև օտարազգի դիմորդների հավաքագրման և ընդունելության կազմակերպման վերաբերյալ հարցեր:

Հանդիպման վերջում «AVoTaR» ՍՊԸ՝ Մասնագիտական ուսուցման և հավաքագրման գործակալության և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի միջև կնքվեց Փոխըմբռնման հուշագրի, որի նպատակն է համագործակցելու «Քույրական գործ» և «Մանկաբարձական գործ» մասնագիտությունների շրջանավարտների համար Գերմանիայի Դաշնությունում աշխատանքի հնարավորություններ փնտրելն ու առաջարկելը:

«Campus International» կազմակերպության հետ բանավոր պայմանավորվածություն ձեռքբերվեց սեղմ ժամկետներում ևս կնքել համագործակցության պայմանագիր:

2023թ.հունիսի 6-ին «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի հիմնադիր Մարինե Նանյանի հրավերով, ՈԱ գծով տնօրենի տեղակալ Արայիկ Գյոզալյանի նախաձեռնությամբ քոլեջ էին այցելել Հայաստանում «Campus International» կազմակերպության համահիմնադիր՝ Աշոկ Կարուվարաթոդիին և «Campus International» կազմակերպության Դուբայի մասնաճյուղի տնօրեն՝ Մեթյու Աբելը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2023-2024 ուս.տարվանից կազմակերպել օտարազգի դիմորդների համար նախապատրաստական դասընթացներ, կազմակերպել «Քույրական գործ» մասնագիտությամբ առաջին կուրսի ընդունելություն օտարազգի դիմորդների համար: Նախատեսվեց 2023-2024 ուստարվանից իրականացնել օտարազգի քաղաքացիների ընդունելություն «Քույրական գործ» մասնագիտությամբ: Կնքվեց նաև համագործակցության հուշագիր «Քեմփս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ,որը հանդիսանում է Քոլեջի «Քույրական գործ» մասնագիտությամբ՝ Ասիական հետևյալ երկրներից՝ Բահրեյն, Բութան, Չինաստան, Հնդկաստան, Ինդոնեզիա, Ճապոնիա, Քուվեյթ, Մալազիա, Մալդիվներ, Նեպալ, Օման, Քաթար, Սաուդիան Արաբիա, Սինգապուր, Շրի Լանկա, Թայլանդ, Միացյալ Արաբական Էմիրություններ, Աֆրիկա աշխարհամասի դիմորդներին ներգրավող միակ և բացառիկ մարմինը:

Տեղի ունեցավ նաև «Գրոդնոյի պետական բժշկական քոլեջի» և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ղեկավար կազմերի առցանց պաշտոնական հանդիպումը: Բելառուսի կողմից հանդիպմանը մասնակցում էին՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Դանուտա Անտոնովնա Բարցևիչ, ուսումնամեթոդական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ելենա ԼեոնիդովնաԳորդեյը, քույրական գործ բաժնի վարիչ՝ Տատյանա ԻվանովնաՍերբինը, ղեկավար կազմի և մասնագետների որակավորման բարձրացման և վերապատրաստման բաժնի պետ՝ Տայանա Սերգևնա Յակոլցևիչը և մեթոդիստ՝ Տատյանա Յուրևնա Յանչևսկայան: «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կողմից հանդիպմանը ներկա էին՝ հիմնադիր Մարինե Նանյանը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Նարինե Եգորյանը, ուսումնական մասի վարիչ՝ Լիլիթ Հարությունյանը, տնօրենի տեղակալ ՈԱ գծով՝ Արայիկ Գյոզայանը, ուսումնական մասի վարիչի տեղակալ՝ Հասմիկ Քոչարյանը և Թերապիայի և նեղ մասնագիտական առարկաների ամբիոնի վարիչ՝ Անյուտա Գրիգորյանը: Առաջին հարցով հստակեցվեց երկկողմանի պաշտոնական փոխայցերի ժամանակացույցը և պլանները: Բելառուս գործընկերները հաստատեցին իրենց առաջարկը՝ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի առնվազն 3 ուսանողի ամառային պրակտիկաների կազմակերպում իրենց բազաներում (անվճար հիմունքներով):

Ձեռքբերումներից այն էր,որ ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ Պոակ-ի հետ կնքվեց պայմանագիր,որի արդյունքում ուսանողները ներկա գտնվեցին կատարվող հետազոտական աշխատանքներին:

17.11.2022թ. «Գրիորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Զինվորական նախնական պատրաստության դասախոս, Քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ, փոխգնդապետ՝ Համլետ Ավոյանի նախաձեռնությամբ առաջին կուրսի ուանողները այցելեցին **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ»** Համահայկական հայրենասիրական ՀԿ, որի հրա-ձգարանում անցկացվեց նախնական զինվորական պատրաստության առարկայից գործնական պարապմունք: Պարապմունքը անցկացվեց կրակային պատրաստությունից՝ «ԱԿ-74» և «ԱԿ-47» ինքնաձիգների մասերի և մեխանիզմի ծանոթացում, զենքի քանդել և հավաքել, ինչպես նաև անցկացվեց գործնական հրաձգություն օդամղիչ հրացանից՝ փորձնական և ստուգողական, որը մեծ ոգևորույթուն առաջացրեց ուսանողների մոտ:

Լավագույն արդյունքներ ցուցաբերած ուսանողները պարգևատրվեցին **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ»** ՀԿ-ի ղեկավարության կողմից անվանական պատվոգրերով և մեդալներով:

Ամենաբարձր արդյունք ցուցաբերած առաջին կուրսի ուսանողուհի Էլիզա Հովհաննիսյանը պարգևատրվեց անվանական պատվոգրով, գավաթով և մեդալով:

Հաշվետու տարում կազմակերպվեցին էքսկուրսիաներ Հայաստանի գեղատեսիլ վայրերով,ուսանողները դասախոսների ուղեկցությամբ այցելեցին տուն-թանգարաններ:

Վարչական կազմ

№	Անուն,ազգանուն	Պաշտոն
1.	Իրինա Վարդանյան	Տնօրեն
2.	Լիլիթ Հարությունյան	Տնօրենի տեղակալ
3.	Անահիտ Գյոզալյան	ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ
4.	Գևորգ Հովակիմյան	Հաշվապահ
5.	Նունե Սահակյան	Պրակտիկայի և կարիերայի պատասխանատու
6.	Հասմիկ Քոչարյան	Բաժնի վարիչի օգնական
7.	Համլետ Ավոյան	Քաղ.պաշտպանության շտաբի պետ

Ամբիոնի վարիչներ

№	Ամբիոն	Անուն,ազգանուն
1.	Անատոմիայի, ֆիզիոլոգիայի, մանրէաբանության և հիգիենայի	Անի Մարգարյան
2.	Ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագի-տական և ընդհանուր բնագիտական առարկաների	Լիլիթ Բաբայան
3.	Դեղագիտական առարկաների	Նոնա Հովհաննիսյան
4.	Ատամնատեխնիկական և ստոմատոլագիական առարկաների	Սուսաննա Գևորգյան
5.	Նեղ մասնագիտացված առարկաների, թերապիայի և քույրական գործ առարկաների	Անյուտա Գրիգորյան

Ընդունելություն

Քոլեջը հաշվետու ժամանակահատվածում ընդունելությունը «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» և «Քույրական գործ» մասնագիտություններով իրականացրել է համաձայն լիցենզիայի սահմանված տեղերի թվաքանակի.

«Դեղագործություն» մասնագիտությամբ /հիմն.կրթ./-7 ուսանող

«Դեղագործություն» մասնագիտությամբ /միջն.կրթ./-16 ուսանող

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ /հիմն.կրթ./-4 ուսանող

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ /միջն.կրթ./-1 ուսանող

«Քույրական գործ» մասնագիտությամբ /հիմն.կրթ./-8 ուսանող

«Քույրական գործ» մասնագիտությամբ /միջն.կրթ./-8 ուսանող

Ընդունելության թվաքանակի նվազումը կապված է ոլորտային մասնագիտությունների գծով ընդունելության դիմումների ընդունման սեղմ ժամկետի հետ:

Տնօրինական խորհրդի կազմը

1.	Նախագահ՝	Ի.Վարդանյան
2.	Քարտուղար՝	Լ.Հարությունյան
3.	Անդամներ՝	Ն.Եգորյան -տնօրենի տեղակալ
		Ս.Հովակիմյան- հաշվապահ
		Ա.Գյոզալյան-ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ
		Ն.Սահակյան-պրակտիկայի և կարիերայի պատասխանատու
		Լ.Ալեքսանյան-դասախոս
		Հ.Ավոյան- Քաղ.պաշտպանության շտաբի պետ
		Ա.Թորոսյան-արտաքին շահակից
		Ժ.Թարխանյան-ուս.խորհրդի նախագահ

Տնօրինական խորհուրդը իրականացնում է քոլեջին առնչվող ցանկացած հարցի քննարկում,հաստատում է ուս.աշխատանքային պլանը:

2022-2023 ուսումնական տարվա պետական ամփոփիչ ատեստավորման և փոխադրական քննությունների արդյունքների վերաբերյալ:

2022-2023 ուս.տարում ունեցել ենք 46 շրջանավարտ, 23-ը՝ «Դեղագործություն» մասնագիտության, 14-ը՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության, 3-ը՝ «Մանկաբարձական գործ», 6-ը՝ «Քույրական գործ»: 46 շրջանավարտներից 6-ին տրվել է պետական նմուշի գերազանցության դիպլոմ: Պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները հետևյալն էին՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության քննության արդյունները՝ առաջադիմությունը՝ 100%,որակ՝ 28%,միջին 6,1, «Դեղագործություն» III[9] կուրսում՝ առաջադիմությունը՝ 100%,որակ՝ 70%,միջին՝ 7,35, «Դեղագործություն» II[12] կուրսում՝ առաջադիմությունը՝ 100%, որակ՝ 61%,միջին՝ 6,8,«Քույրական գործ»: մասնագիտության առաջադիմությունը՝100%, որակ՝ 66% միջին՝ 8, «Մանկաբարձական գործ» մանսագիտության՝ առաջադիմությունը՝ 100%,որակ՝100% միջին՝ 8:

2022-2023 ուսումնական տարվա հանրակրթական 1-ին կուրսի պետական փոխադրական քննությունների արդյունքերը հետևյալն էին.

«Հայոց լեզու և գրականություն» առարկայի թեստային գրավոր քննությունից առաջադիմությունը կազմում է 100%,որակը 52% միջին 7:

«Հայոց պատմություն» առարկայի թեստային գրավոր քննությունից առաաջադիմությունը կազմում է 100%,որակը 26%,միջին 5,6

«Մաթեմատիկա» առարկայի թեստային գրավոր քննությունից առաաջադիմությունը կազմում է 84%, որակը 36,8%միջին 5,8:

Կուրսից կուրս փոխադրվել են 88 ուսանող, որից 24-ը՝ պայմանական:

Եզրակացություն.

- Քոլեջը 2022-2023 ուստարում ապահովել է դասընթացների անխափան կազմակերպումը, ամբիոնների բնականոն գործունեությունը:

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ